Funded by
the European Union

EASTERN PARTNERSHIP
CIVIL SOCIETY FORUM

«Սոցիալական ձեռներեցության իրավիճակի համապարփակ վերլուծությունն ու զարգացման հիմնուղիները ՀՀ-ում»

հետազոտական զեկույց

Բիթուէս
«Հայկական սոցիալական ձեռնարկատիրության ասոցիացիա» ՀԿ

Երևան 2023

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում բացառապես ««**ԲիԹուէս**» հայկական սոցիալական ձեռնարկատիրության ասոցիացիա» ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական Միության տեսակետները

Բովանդակություն

Ներածություն 4

Սոցիալական ձեռներեցության իրազեկվածության աստիճանի գնահատումը Հայաստանում 5

Հայաստանում ՍՁ ոլորտում առկա խոչընդոտների և զարգացման հիմնուղիները 12

Եզրակացություններ 23

Ներածություն

Սոցիալական ձեռներեցությունը (ՍՁ) երկու ուղղությունների համադրություն է՝ սոցիալական ազդեցության ապահովում և ձեռնարկատիրական գործունեության իրականացում: ՍՁ-ի եկամուտների հիմնական մասը գոյանում է ձեռնարկատիրական գործունեությունից՝ դրանով տարբերակվելով հասարակական գործունեությունից: ՍՁ-ի հիմնական նպատակը հասարակության մեջ, համայնքում և երկրում սոցիալական խնդիրների լուծումն է: ՍՁ-ն միայն տնտեսական ոլորտի խնդիր չէ, այն ունի մշակութային, մտածողության, արժեքային համակարգը փոխելու, մարդկանց սոցիալական համերաշխության և արդարության արժեքներին մոտեցնելու գործառույթ: ՍՁ-ն նոր երևույթ է հայաստանյան իրականությունում, որտեղ առաջին ՍՁ-ները բացվել են 2005 թվականին: Միևնույն ժամանակ, չնայած ՍՁ-ի արդիականությանն ու կարևորությանը, Հայաստանում դրա ներուժը դեռևս ամբողջությամբ իրացված չէ: Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացումը ներկայումս գտնվում է մի շարք միջազգային դոնոր կազմակերպությունների և տեղական հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում:

Կան մի շարք դոնորական ծրագրեր՝ ուղղված սոցիալական ձեռնարկությունների և ոլորտային էկոհամակարգի զարգացմանը: Այս ամենի համատեքստում, առանցքային է դառնում հասարակության և շրջանում ՍՁ-ի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի գնահատումը, ոլորտում գործող հիմնական սուբյեկտների խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև նրանց զարգացման տեսլականը, որը և սույն հետազոտության հիմնական նպատակն է:

Սոցիալական ձեռներեցության իրազեկվածության աստիճանի գնահատումը Հայաստանում

Սույն հետազոտության շրջանում Հայաստանում ՍՁ իրազեկվածության աստիճանը գնահատվել է դաշտային աշխատանքների միջոցով, որն իրականացվել է նախապես մշակված հարցաթերթով՝ կիրառելով առցանց և օֆլայն տարածման մեթոդները, ինչպես նաև հեռախոսային էքսպրես հարցումները:

Գծապատկեր 1.

Մասնակիցների սեռային բաշխվածությունը (%)



Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է 18,586 մարդ, որոնց սեռային բաշխվածությունը ներկայացված է գծապատկեր 1-ում: Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 1-ը, հարցվածների 68.3%-ը կամ 12,693 մարդ իգական սեռի են, իսկ 31.7%-ը կամ 5,893 մարդ՝ արական: Դաշտային աշխատանքների տարիքային բաշխվածությունը ցույց է տալիս, որ մասնակիցների 36.4%-ը կամ 6760 մարդ 18-24 տարեկան են, 46.2%-ը կամ 8584 մարդ՝ 25-34 տարեկան, 10.6%-ը կամ 1975 մարդ՝ 35-44 տարեկան, 2.4%-ը կամ 453 մարդ՝ 45-54 տարեկան, 2.5%-ը կամ 457 մարդ՝ 55-64 տարեկան, իսկ 1.9%-ը կամ 357 մարդ՝ 65 և բարձր տարիքի են:

Հարցվողների 87.6%-ը կամ 16,275 մարդ ունեն կամ ստանում են բարձրագույն կամ հետբուհական կրթություն, 11.4%-ը կամ 2,115 մարդ՝ միջին մասնագիտական նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն, իսկ 1.1%-ը կամ 196 մարդ՝ միջնակարգ ընդհանուր կրթություն:

Գծապատկեր 2.

Մասնակիցների զբաղվածությունը (մարդ)



Հարցման մասնակիցների զբաղվածության ուսումնասիրությունը (բազմակի պատասխանով հարց) ցույց է տալիս, որ մասնակիցների 67.8%-ը կամ 12,594 մարդ աշխատող են, 56.7%-ը կամ 10547 մարդ՝ ուսանող, 19.7%-ը կամ 3657 մարդ՝ գործազուրկ, 6.8%-ը կամ 1264 մարդ՝ ձեռներեց, իսկ 1.7%-ը կամ 324 մարդ այլ զբաղվածություն ունեն:

Հարցման մասնակիցների մարզային բաշխվածության ուսումնասիրությունը ներկայացված է գծապատկեր 3-ում: Այսպես, մասնակիցների հիմնական մասը՝ 80.9%-ը կամ 15,048 մարդ ապրում է մայրաքաղաք Երևանում: Հարցվածների թվով հաջորդում է Սյունիքի, որտեղից հարցմանը մասնակցել է հարցվածների 3.2%-ը:

Հարցմանը մասնակցած ամենաքիչն ունի Արարատի մարզը, որից մասնակցել է 152 մարդ կամ 0.8%-ը:

Գծապատկեր 3.

Հարցման մասնակիցների մարզային բաշխվածությունը (%)



Ընդհանուր հարցվածների 66.5%-ը կամ 12,364 մարդ նշել է, որ տեղյակ չէ, թե ինչ են ՍՁ-ները, իսկ մնացած 33.5%-ը կամ 6222 մարդ տեղյակ է: Ավելին, հատկանշանական է, որ ՍՁ-ի մասին իրազեկված մարդկանց 78.2%-ը բնակվում են Երևանում, այնուհետև Գեղարքունիքի մարզում (5.3%) և Շիրակի մարզում (3.1%): ՍՁ-ների մասին ամենաքիչ իրազեկվածության մակարդակն ունեն Արագածոտնի և Կոտայքի մարզերում բնակվող հարցվողները՝ համնապատասխաբանար՝ 1.1% և 0.7%: ՍՁ-ների մասին իրազեկված հարցման մասնակիցների մարզային բաշխվածությունը ներկայացված է գծապատկեր 4-ում:

Մյուս կողմից, ՍՁ-ների մասին իրազեկվածների 58.7%-ը կամ 3655 մարդ, լսել են իրենց համայնքներում գործող ՍՁ-ների մասին, 41.3%-ը, չնայած ՍՁ-ների մասին

իրենց իրազեկվածությանը, չունեն տեղեկատվություն իրենց համայնքում գործող որևէ ՍՁ-ի մասին:

Գծապատկեր 4.

ՍՁ-ների մասին իրազեկված հարցման մասնակիցների մարզային բաշխվածությունը (%)



«Եթե տեղյակ եք, ապա հիմնականում ո՞ր ուղղություններով են ՍՁ-ները ծրագրեր իրականացնում» հարցին պատասխանել են նաև իրենց համայնքներում գործող ՍՁ-ների մասին իրազեկված 3655 մարդ, որոնք պատասխանները ներկայացված են գծապատկեր 5-ում: Այսպես, հարցվողների 27%-ը կամ 982 մարդ նշել են, որ գիտեն տնտեսական գործունեություն իրականացնող ՍՁ-ների մասին, 19.1%-ը կամ 698 մարդ՝ շրջակա միջավայրի պահպանության, 16.3%-ը կամ 596 մարդ՝ համայքային զարգացման իրականացնող ծրագրեր ՍՁ-ների մասին: Այլ պատասխանների մեջ գերակշռող տեսակարար կշիռ ունեն հատկապես մշակութային ու գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ՍՁ-ների մասին տեղեկացված հարցվողները:

Գծապատկեր 5.

«Եթե տեղյակ եք, ապա հիմնականում ո՞ր ուղղություններով են ՍՁ-ները ծրագրեր իրականացնում» հարցի պատասխանի բաշխվածությունը (%)



Հարցման մասնակիցներին ուղղվել է նաև «Ինչքանո՞վ եք կարևորում ՍՁ-ների առկայությունը Հայաստանում» հարցը, որի պատասխանները ներկայացված են գծապատկեր 6-ում: Այսպես, հարցման մասնակիցների 37.6%-ը կամ 6985 մարդ կարևորել են ՍՁ-ների առկայությունը Հայաստանում, իսկ 14.9%-ը կամ 2764 մարդ՝ շատ են կարևորել: Հետաքրքիր է արձանագրել, որ հարցման մասնակիցների ընդամենը 4.7%-ը կամ 870 մարդ են նշել, որ չեն կարևորում ՍՁ-ների առկայությունը Հայաստանում: Մյուս կողմից, հարցվողների շրջանում բավական բարդ է անտարբերության աստիճանը ՍՁ-ների նկատմամբ: Մասնավորապես, հարցման մասնակիցների 23%-ը կամ 4269 մարդ նշել է, որ քիչ է հետաքրքրում ՍՁ-ների առկայությամբ, իսկ 19.9%-ը կամ 3698 մարդ՝ առհասարակ չի հետաքրքրվում ՍՁ-ների գործունեությամբ: Սա կարելի է բացատրել նաև հարցման մասնակիցների շրջանում ՍՁ-ների մասին իրազեկվածության ցածր աստիճանով: Ստացվում է, որ մասնակիցները հիմնականում տեղյակ չեն, թե ինչ կարևորություն ունի ՍՁ-ների գործունեությունը Երևանում և մարզերում, ինչ հիմնական գործառույթներ են նրանց

իրականացնում ու խնդիրներ լուծում, հետևաբար և անտարբեր են դրանց առկայության կամ բացակայության հանգանքներով:

Գծապատկեր 6.

«Ինչքանո՞վ եք կարևորում ՍՁ-ների առկայությունը Հայաստանում» հարցի պատասխանի բաշխվածությունը (%)



Դաշտային աշխատանքների շրջանակում ուսումնասիրվել է նաև, թե ՍՁ-ների առկայությունը Հայաստանում կարևորող հարցվողների համար ՍՁ-ների գործունեության որ սկզբունքներն են հատկանշական: Ստացվել է, որ բազմակի պատասխանով այս հարցին հարցվողների հիմնական մասը (8457 մարդ կամ պատասխանողների 86.7%) նշել է, որ կարևորում է ՍՁ-ների սոցիալական արդարության սկզբունքը: Պատասխանողների 56.2%-ը կամ 5475 մարդ նշել է, որ կարևորում է ՍՁ-ների օգնությամբ բիզնես ոլորտի զարգացման հնարավորությունների ընդլայնումը, 36.9%-ը կամ 3597 նշել է նոր դրամաշնորհային ծրագրեր ներգրավելու հնարավորությունները, իսկ 12.9%-ը կամ 1257 մարդ առանձնացրել է ՍՁ-ների դերը խոցելի խմբերի հասարակության մեջ ինտեգրվելու գործում:

Այսպիսով, ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ հայաստանյան հասարակությունը դեռևս բավարար չափով իրազեկված չէ ՍՁ-ների գործունեության, դրանց հիմնական ուղղությունների ու սկզբուքների մասին, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Իհարկե, ՍՁ-ները համեմատաբար

նոր և զարգացող երևույթ են մեր հասարակությունում: Հայաստանում ՍԶ ոլորտի զարգացման համար առանցքային է արդեն գործունեություն ծավալող լավագույն օրինակների ճիշտ և թիրախային ներկայացումը հասարակության շրջանում: Միևնույն ժամանակ, այս հարցում անհրաժեշտ են պետական նպատակային քաղաքականություն, համապատասխան միջոցառումներ և աջակցման մեխանիզմներ, որոնք ոլորտի կայուն զարգացման «լոկոմոտիվը» կարող են դառնալ:

Հայաստանում ՍՁ ոլորտում առկա խոչընդոտների և զարգացման հիմնուղիները

Սույն հետազոտության շրջանակներում ՍՁ ոլորտի զարգացման հիմնական խոչընդոտները բացահայտելու, խնդիրները վերհանելու ու դրանց հաղթահարման ելքերը գտնելու նպատակով իրականացվել է ֆոկուս խմբային հանդիպում, որին մասնակցել են Հայաստանում ՍՁ ոլորտի հիմնական շահակիցները, սոցիալական ձեռնարկատերերը և ոլորտի փորձագետները: Նախապես մշակված հարցերի միջոցով ֆոկուս խմբային հանդիպման ընթացքում մասնակիցներն իրականացրել են Հայաստանում սոցիալական ձեռներեցության առկա իրավիճակի գնահատում, քննարկել ոլորտում առկա հիմնական մարտահրավերները, որոնք խոչընդոտում են կայուն զարգացման ապահովման հնարավորությունները ու նախանշել այն ուղիները, որոնք կարող են օգնել կայացնելու սոցիալական ձեռներեցության ինստիտուտը Հայաստանում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացման առանցքային մարտահրավեր է ոլորտի վերաբերյալ իրազեկվածության ցածր աստիճանն ու տեղեկատվության պակասը: Ինչպես ընդհանուր հասարակության, այնպես էլ հենց ոլորտի շահակիցների շրջանում բավական քիչ է տեղեկացվածությունը, թե ինչով է սոցիալական ձեռներեցությունը տարբերվում ավանդական բիզնես մոդելներից, ինչպես ճիշտ ու հասցեական ձևակերպել սոցիալական խնդիրը: Ոլորտի փորձագիտական դաշտում ևս համակարգային մոտեցման, հիմնական հասկացությունների հստակ ու միասնական սահմանման և դրանով առաջնորդման խնդիր կա: Ստացվում է, որ «սոցիալական ձեռնարկատեր», «սոցիալական խնդիր», «սոցիալական ազդեցություն» և ոլորտում կիրառելի մի շարք այլ առանցքային հասկացությունների վերաբերյալ միասնական մոտեցումների բացակայությունը լուրջ խոչընդոտներ է ստեղծում Հայաստանում ՍՁ էկոմիջավայրի զարգացման համար: Այս առումով, բավական լուրջ

ջանքեր ու միջոցառումներ են անհրաժեշտ, որոնք ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության գործիքակազմերի կիրառմամբ պետք է միտված լինեն հասարակության լայն շերտերում ՍՁ հիմնական գաղափարախոսության տարածմանը: ՍՁ ոլորտի հիմնական շահակիցների պարբերական հանդիպումները, կոնֆերանսներն ու քննարկումները կարող են հարթակ ձևավորել, որտեղ շահակիցները համաձայնության կգան հիմնական հասկացությունների շուրջ՝ ըստ այդմ նպաստելով նաև դրանց տարածմանն ու ՍՁ-ի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացմանը: Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի արդիականացմանը և ՍՁ ոլորտը դրանցում ներառելու և համակարգելու գործընթացներին զուգահեռ անհրաժեշտ են նաև ոլորտի շահակիցների ջանքերն ու պատրաստակամություն կիսվելու գիտելիքներով ու փորձով, ինչը վստահաբար նպաստելու է հասարակության շրջանում ՍՁ իրազեկվածության և տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը: Հատկապես հայկական մասնագիտական շրջանակներում առկա ակադեմիական գրականության պակասը լրացնելու համար նմանատիպ իրազեկման արշավներն ու միջոցառումները կենսական նշանակություն ունեն ոլորտի զարգացման համար:

Հայաստանում սոցիալական ձեռներեցների համար էական մարտահրավեր է մնում ֆինանսական միջոցների հասանելիությունը: Դրամաշնորհների, ներդրումների և ֆինանսական ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը խոչընդոտում է սոցիալական ձեռնարկությունների աճին և ընդլայնմանը: Ֆոկուս խմբի հանդիպման մասնակիցները մատնանշում են երբեմն դրամաշնորհների կամ հարկային արտոնությունների տրամադրումը դառնում է խանգարող հանգամանք ոլորտի մրցակցային զարգացման ու ընդլայնման համար: Հարկային արտոնությունները ոչ թե պետք է տրամադրվեն ՍՁ ոլորտին, այլ բիզնես գործունեություն իրականացնող ցանկացած նորաստեղծ ձեռներեցությանը շուկայում ամրանդման ու դիրքավորման փուլում աջակցության նպատակով:

Հատկապես նորաստեղծ ՍՁ-ների համար դրամաշնորհները կարող են հաճախ նույնիսկ խոչընդոտող գործոն դառնալ ձեռնարկության ներուժի ամբողջական բացահայտման ու իրացման հարցում: Մյուս կողմից, շահակիցներն անչափ կարևոր են համարում անտոկոս փոխառությունների առկայությունը, որոնք կարող են պետական արդյունավետ քաղաքականության առկայության պարագայում տրամադրվել նաև ֆինասնական համակարգի սուբյեկտների՝ բանկերի կողմից: ՍՁ ոլորտին աջակցությունը շատ կարևոր է նրանց մասշտաբայնության ապահովման տեսանկյունից: Սոցիալական ազդեցության շրջանակի ընդլայնման փուլում անտոկոս փոխառությունները կամ նպատակային դրամաշնորհային ծրագրերը կարող են նպաստել հաջողած փորձ ունեցող ՍՁ-ների գործունեության տիրույթի ընդլայնմանը, նոր շուկաներում դիրքավորմանն ու բիզնեսի աճին: Առհասարակ, դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ հենց սոցիալական ձեռներեցների շրջանում կարծրատիպային մոտեցումները կոտրելու անհրաժեշտություն է: Առանցքային է, որ սոցիալական ձեռներեցը տրամադրվող դրամաշնորհը կարողանա դիտարկել, առաջին հերթին, որպես իր առջև ծառացած սոցիալական խնդիրը լուծելու ևս մեկ գործիք, այլ ոչ թե որպես հիմնական ֆինանսավորման աղբյուր, դրանով իսկ կանխելով դրամաշնորհային ծրագրերից կախվածությունը:

ՍՁ ոլորտում ֆինանսական ռեսուրսների ծավալներն ընդլայնելու համար կարևոր է համագործային հարաբերությունների խթանումն ինչպես տարբեր ոլորտային միջազգային կազմակերպությունների, այնպես էլ Եվրամիության դրամաշնորհային ու ներդրումների ծրագրերի ներգրավման ուղղությամբ: Հատկապես միջազգային հանրության շրջանում արդիականություն ունեցող կարևոր թեմաների (վերականգնվող էներգիա, կայունություն և այլն) զարգացմանն ու տարածմանն ուղղված ՍՁ գործունեությունը կարող է առանցքային դեր խաղալ միջազգային համագործակցության խթանման հարցում՝ նպաստելով նաև Հայաստանում կանաչ տնտեսության հայեցակարգի զարգացմանն ու հասարակության քաղաքացիական պատասխատվության ուժեղացմանը:

Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացման համար կարևոր է նաև համապատասխան իրավակարգավորող դաշտի առկայությունը: Առաջին հերթին, ոլորտի շահակիցներին անհրաժեշտ է մշակել ոլորտի զարգացման ռազմավարություն, որտեղ պետք է ներկայացվի ինչպես ՍՁ-ի նշանակությունը որպես համայքային զարգացման ապահովման առանցքային դերակատար, այնպես էլ ոլորտի զարգացման տեսլականն ու հիմնուղիները: Հայաստանում ՍՁ ոլորտի իրավակարգավորման բացակայությունը հանգեցրել է նրան, որ չկան հստակ չափորոշիչներ, որոնք տարբերակում են սոցիալական ձեռներեցությունն ավանդականից, ուստի բիզնես գործունեություն ծավալող ցանկացած սուբյեկտ կարող է իրեն «հռչակել» ՍՁ: Մինչդեռ, ՍՁ որպես հայեցարակարգի տարածմանը զուգահեռ մեծ կարևորություն է ստանում ոլորտ մուտք գործելու հստակ նախապայմանների սահմանումը: Օրենքով ու համապատասխան ենթաօրենսդրական ակտերով նմանատիպ կանոնների առկայությունը միանշանակ կարող է «մաքրել» ՍՁ ոլորտն ու նպաստել շահակիցների շրջանում հստակության ամրապնդմանը:

Ոլորտի զարգացման համար կարևոր խնդիր է նաև սոցիալական ազդեցության շրջանակի գնահատման հստակ ու թիրախային գործիքակազմի բացակայությունը: Ցանկացած սոցիալական ձեռնարկատեր իր համար պետք է կարողանա մշակել սոցիալական ազդեցության գնահատման ցուցանիշներ, որով չափելի կդարձնի սոցիալական խնդրի լուծմանն ուղղված իր գործունեությունը: Միևնույն ժամանակ, անհնար է գտնել սոցիալական ազդեցության գնահատման ցուցանիշների միասնական մոդել, քանի որ սոցիալական խնդիրները բավական սուբյեկտիվ են ու առանձնահատուկ՝ պայմանավորված համայքների մշակութային տարբերություններով ու յուրահատկություններով: Հատկանշական է նաև, որ ՍՁ ոլորտի զարգացման հիմնարար նախապայման է, որպեսզի ձեռներեցն ինքը լինի այն սոցիալական խնդրի կրողը, որի լուծմանն ուղղված է նրա բիզնես գործունեությունը: Այս տրամաբանության համաձայն՝ ՍՁ ոլորտի զարգացման համար ոչ թե պետք է ավանդական բիզնես

մոդելներն հարմարեցնել սոցիալական որևէ խնդրին, այլ սոցիալական խնդրից բխեցնել ձեռներեցությունը, որը նպաստելու է դրա լուծմանը:

Հայաստանում ՍՁ ոլորտի կայուն զարգացման ապահովման համար կենսական նշանակություն ունի շահակիցների կարողությունների ու հմտությունների կատարելագործումը, որոնք կարող են իրականացվել հատկապես վերապատրաստման, մենթորության ու աջակցության տարատեսակ այլ ծրագրերի մշակման և պարբերական իրականացման միջոցով: Սա ոլորտում մարդկային ռեսուրսների արդյունավետ համալրման և կառավարման առանցքային խնդիր կարող է լուծել: Այսպես, ՍՁ ոլորտում ֆինանսիստների, մարկետոլոգների և այլ աշխատակիցների մասնագիտական գործունեությունը զգալիորեն տարբերվում է ավանդական ձեռներեցության ոլորտում իրականացվող աշխատանքներից: Հետևաբար, ոլորտում արդյունավետ կադրային քաղաքականության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ են ՍՁ առանձնահատկություններն ու յուրահատկություններն ավանդականից տարբերող մասնագետների ներգրավում, վերապատրաստում և մասնագիտական կարողությունների տեղայնացում:

ՍՁ ոլորտում խնդահարույց է նաև ոլորտում գործունեություն ծավալող սուբյեկտների մասշտաբայնության ապահովման ու գործունեության ընդլայնման հարցերը: Շատ դեպքերում, ՍՁ-ները իրենց համայքներում լուծելով սոցիալական խնդիրները, իրենց գործունեության տիրույթն ընդլայնելու բնական պահանջի առաջ կանգնում, որը սակայն, նրանց համար բավական մարտահրավեր է ի հայտ բերում: Այս համատեքստում, մեծ նշանակություն ունի արդեն գործող ու մասշտաբայնության հարցին առնչվող ՍՁ-ներին ուղղված հասցեական ու թիրախային միջոցառումների առկայությունը:

Առհասարակ, հայաստանյան իրականությունում ՍՁ-ները բավական «կաղապարված» մի քանի սոցիալական խնդիրների շուրջ (կանանց կարողությունների զարգացում, հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրում հասարակությանը, սահմանամերձ բնակավայրերում առկա սոցիալական խնդիրներ

և այլն): Մինչդեռ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ ՍՁ-ների խնդիրը ոչ միայն կենտրոնացած է խոցելի խմբերի խնդիրների լուծմանը, այլև գործունեության տիրույթը ներառում է նաև այնպիսի առանցքային խնդիրներ, ինչպես օրինակ, բնապահպանականը: Այս առումով, Հայաստանում սոցիալական ձեռներեցության հայեցակարգային վերաձևակերպման և գործունեության տիրույթի ընդլայնման խնդիր կա:

Ֆոկուս խմբային հանդիպման շահակիցները բարձրաձայնեցին ոլորտի վերաբերյալ մի շարք կարծրատիպերի մասին, որոնք խնդրահարույց են դարձնում ՍՁ գործունեության իրականացումը: Այսպես, հասարակության շրջանում թյումըմբռնում կա, որ ՍՁ-ն պարտադիր հանգեցնում է դրամաշնորհներ կամ արտոնություններ ստանալուն: Մինչդեռ սոցիալական ձեռներեցը իր համայնքում ապրող խոցելի խմբերի սոցիալական խնդիրը լուծելուն միտված ջանքեր է գործադրում: Մյուս կողմից, հաճախ սոցիալական ձեռնարկատերը, փորձելով իր բիզնես գործունեության մեջ ներգրավել, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց, բախվում է կարծրատիպային «պատնեշների», երբ համայնքի այլ բնակիչները հրաժարվում են օգտվել ՍՁ արտադրանքից, ինչը հասարակության շրջանում խորքային մտածողության խնդիրների մասին է խոսում: Միևնույն ժամանակ, ֆոկուս խմբի հանդիպման մասնակիցները, ովքեր ՍՁ գործունեություն են իրականացնում, նշում են, որ ակնհայտ են նաև հասարակության շրջանում մտածելակերպի ու ընկալումների դրական փոփոխությունները:

Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացման հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից մեծ կարևորություն ունի ոլորտի շահակիցների միջև համագործակցային ամուր կապերի ձևավորումն ու հարթակի առկայությունը, որտեղ նրանք պարբերական հանդիպումների ու քննարկումների միջոցով կարող են բարձրաձայնել իրենց հուզող խնդիրներն ու հասցեական լուծումներ փնտրել: Այս առումով, անհրաժեշտ է վերահիմաստավորել «Հայկական սոցիալական ձեռնարկատիրության ասոցիացիա» ՀԿ-ի (ՀՍՁ ասոցիացիա) դերը: Ընդ որում, ՀՍՁ

ասոցիացիա գործառույթների ընդլայնման ճանապարհային քարտեզի վերաբերյալ ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցները տարբեր մոտեցումներ ունեն: Մի կողմից, առաջարկվում է ՀՍՁ ասոցիացիա կողմից իրականացվող տարբեր ծրագրերի ֆինանսավորումների հաշվին ձևավորված բյուջեով մշտական աշխատանքային թիմ ունենալ, որոնց գործառույթները կլինեն նաև ոլորտում մշտադիտարկման և կարիքների գնահատման աշխատանքները, ինչը հնարավոր կտա ոլորտում առկա խնդիրները միակետրոն ու հասցեական ներկայացնել պետական մարմիններին ու միջազգային կազմակերպություններին: Մյուս կողմից, առաջարկվում է ՀՍՁ ասոցիացիա գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուր դիտարկելը ոլորտի շահակիցների անդամավճարները, ովքեր ավելի մեծ պատասխանատվության զգացում կցուցաբերեն ՀՍՁ ասոցիացիա շուրջ հա-մախմբվելու և այն որպես ոլորտի կայացման ինստիտուտ զարգացնելու տեսլականին:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացման համար կարևորել է տարանջատել ու խմբավորել գործող սոցիալական ձեռնարկություններն ըստ կոնկրետ խմբերի՝

- ✓ Սթարթափային փուլում գտնվող ՍՁ-ներ,
- ✓ Ընդլայնման փուլում գտնվող ՍՁ-ներ:

ՍՁ-ների նմանատիպ խմբավորումը հնարավորություն է տալիս հասցեական դարձնել նաև ՍՁ-ների մոտ առկա խնդիրներն ու դրանց աջակցման ծրագրերը, որոնք առանձին խմբերում կարող են բավական տարբեր լինեն իրարից: Այսպես, եթե սթարթափային փուլում գտնվող ՍՁ-ների համար անհրաժեշտ և օգտակար են վերապարտաստումներն ու կարողությունների զարգացման ծրագրերը մինչև փոխառությունների կամ դրամաշնորհային միջոցների տրամադրումը, ապա ընդլայնման փուլում գտնվող ՍՁ-ների համար առավել նշանակալի է «ճիշտ ժամանակին» (just in time) սկզբունքով ֆինանսական միջոցների առկայությունը, որոնք ավելի ուշ տրամադրելիս կարող են կորցնել իրենց նպատակայնությունն ու կարևորությունը: Բացի այդ, արդեն գործող և մասշտաբայնությունն ընդլայնող ՍՁ-

ները հաճախ խնդիրների են բախվում, երբ տրամադրվող փոխառությունները կամ դրամաշնորհային միջոցները պակաս են հաստատվում, քան նախապես մշակված բիզնես նախագիծն է, որի շրջանակերում յուրաքանչյուր նախատեսված միջոցառման կամ ծրագրի համար բյուջե է սահմանվել: Արդյունքում ստացվում է, որ բյուջեի մասնակի հաստատումն անդրադառնում է իրականացվող ծրագրի որակական և քանակական ցուցանիշների վրա:

ՍՁ ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկատերերը հաճախ շուկայական մրցակցության կանոններին չեն կարողանում դիմակայել: Այս առումով, հատկապես պետական գնումների ընթացակարգերում օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն կա, որի պարագայում հավասար մրցակցային պայմաններում առավելությունը կտրվի ՍՁ-ներին՝ հաշվի առնելով նաև այն, որ նրանք սոցիալական խնդիրներ են լուծում համայնքում: Բացի այդ կարևոր է նաև պետական ոլորտում ծառայությունների պատվիրակումը ՍՁ-ներին, նրանց ակտիվ ներգրավումը ոլորտային պետական ծրագրերին, ինչը նպաստելու է ինչպես ՍՁ ոլորտի զարգացմանն, այնպես էլ համայնքային սոցիալական խնդիրների առավել արդյունավետ լուծմանը:

Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացումը պետք է դիտարկել նաև ժամանակակից տեխնոլոգիական առաջընթացի միտումներին համընթաց քայլելու համատեքստում: ՍՁ ոլորտի զարգացման հետ զուգահեռ անհրաժեշտ է ոլորտում դիրքավորել նաև սոցիալական սթարթափերի մոդելը, որի շրջանակերում սոցիալական ձեռներեցությունը կարող է համատեղվել ինովացիոն գործունեության հետ, ինչը ցանկացած բիզնես գործունեության շարժիչ ուժն է: Այս առումով, հատկապես երկարաժամկետ կտրվածքում ՍՁ-ները չեն կարող գոյատևել առանց ինովացիոն բաղադրիչը ինտեգրելու և ուժեղացնելու: Իհարկե, այս ամենը համակարգային մոտեցումներ ու փոփոխություններ է պահանջում, որի շրջանակներում ինչպես ոլորտի շահակիցների, այնպես էլ պետական ու միջազգային կառույցների ներկայացուցիչների ջանքերի մեկտեղման անհրաժեշտություն կա:

Այս ամենի իրականացման արդյունքում ՍՁ ոլորտի զարգացման միտումներին զուգահեռ անհրաժեշտ են հստակ ու հասցեական քայլեր ոլորտի մարքեթինգային առաջմղման, հանրային կապերի ուժեղացման, ՋԼՄ-ների հետ աշխատանքների ակտիվացման ուղղությամբ: Լրատվության ոլորտում մասնագիտական բացը լրացնելու համար առաջարկվում է մշակել և իրականացնել ՋԼՄ-ների վերապատրաստման և կարողությունների զարգացման ծրագրեր՝ ՍՁ-ների վերաբերյալ նրանց գիտելիքներն ամրապնդելու ու հանրայնացման գործընթացներն արդյունավետ կազմակերպելու համար: Սա հնարավոր կտա լուսաբանման տարատեսակ հարթակներ ստեղծել, որտեղ արդեն գործող ՍՁ-ները կարող են կիսվել իրենց հաջողված փորձով, բարձրաձայնել ու մատնանշել այն խնդիրներն ու մարտահրավերները, որոնց նրանք բախվում են իրենց գործունեության ընթացքում:

Ընդհանուր առմամբ, ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցները ևս մեկ անգամ հստակ կարևորեցին ՍՁ-ի դերն ու կարևորությունը հատկապես համայնքների զարգացման հարցում: Ոլորտում գործունեություն ծավալող շահակիցների փորձը ցույց է տալիս, որ եթե նույնիսկ ՍՁ-ն որպես այդպիսին, ինչ-որ պահի դադարեցնում է աշխատանքները, միևնույն է, այն հասարակությունում, որտեղ ինքը գործել է ընկալումների ու միջավայրի դրական փոփոխությունն անհայտ է: Այսպես, ֆոկուս խմբային հանդիպման մասնակիցների մեկի օրինակի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկային ինտեգրելով և համապատասխան հմտություններ ու կարողություններ տալով, նույնիսկ ՍՁ-ի գործունեության դադարեցումից հետո խոցելի խումբ համարվող այդ մարդիկ կարողացան արդեն որպես մրցունակ կադրեր արագ ու անցնցում գտնել նոր աշխատանք այլ գործատուների մոտ:

Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացման համար արդիական ուղղություն է նաև մեծ բիզնես ձեռնարկությունների կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի նպատակաուղղումը ՍՁ-ներ: Սա մի կողմից բիզնես միջավայրում սոցիալական համերաշխության սկզբունքի պահպանման

կարևոր նախապայման կարող է դառնալ, իսկ մյուս կողմից կզարգացնի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գաղափարախոսության կիրառելիությունը Հայաստանում:

Ընդհանուր առմամբ, միջազգային փորձը ևս ցույց է տալիս, որ ՍՁ ոլորտի հիմնական առաջամարտիկները երիտասարդներն են, ուստի հատկապես երիտասարդների շրջանում ոլորտի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, նրանց ՍՁ բիզնես գաղափարներին առարկայական աջակցությունների տրամադրումը, կարողությունների ու հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման ծրագրերը հսկայական ազդեցություն կթողնի երիտասարդների շրջանում ոլորտի վերաբերյալ ճիշտ ընկալումներ ձևավորելու հարցում:

Հայաստանն աշխարհի այն քիչ երկրներից է, որն ունի մրցակցային առավելություն այլ երկրների համեմատ՝ հայկական սփյուռքը, որտեղ առկա մարդկային կապիտալի ներուժի իրացումը ՍՁ ոլորտում միանշանակ հանգեցնելու է ոլորտի հատկապես ինովացիոն ու գիտելիքահեն ուղղությունների զարգացմանը: Այս առումով, սփյուռքի ֆինանսական ու մարդկային ռեսուրսներին ուղղումը ՍՁ ոլորտ դրա զարգացմանն ուղղված պետական քաղաքականության անկյունաքարը պետք է դառնա:

Հայաստանի հիմնական պատմամշակութային ժառանգությունն ու զբոսաշրջային ներուժը հիմնականում կենտրոնացած է համայնքերում: Ընդ որում, հստակ կարելի է արձանագրել, որ զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման առանցքային հնարավորություններից է, որն ուղղակիորեն ու անուղղակիորեն անդրադարձ ունի ՀՀ տնտեսության ընդհանուր զարգացման, տնտեսական ակտիվության ու աճի ապահովման վրա: Այս առումով, սոցիալական ձեռներեցների կողմից գործունեության կենտրոնացումը զբոսաշրջության ոլորտում կարող է խթան դառնալ պատասխանատու, կայուն ու հեռանկարային զբոսաշրջային ծառայություններ մատուցելու համատեքստում, որտեղ

կարժևորվի ինչպես Հայաստանի հարուստ պատմամշակութային ժառանգությունը, այնպես էլ կկարևորվի դրա պահպանումն ու պաշտպանությունը:

Այսպիսով, Հայաստանում ՍՁ զարգացման հիմքը պետք է լինի սոցիալական խնդիրն ու սոցիալական արժեքի ստեղծումը, որի լուծման նպատակը դառնում է համապատասխան բիզնես մոդելի մշակումը: ՍՁ ոլորտի կայացումն ու զարգացումը Հայաստանում օրակարգային նշանակություն ունի՝ հաշվի առնելով մեր երկրի սոցիալական տնտեսական խնդիրներն ու մարտահրավերները: Ստացվում է, որ ՍՁ կարող է դառնալ սոցիալական բարեփոխումներ իրականացնելու և սոցիալական խնդիրներ լուծելու առանցքային գործիք: Այս համատեքստում, պետական աջակցությունը ոլորտի զարգացման ապահովման հարցում մեծ կարևորություն ունի: Հայաստանում արդեն հաջող գործունեություն ծավալող ՍՁ-ների փորձը ցույց է տալիս, որ նրանք կարող են դառնալ համայնքում բնակչության կյանքի որակի բարելավման, բարեկեցության բարձրացման և ընկալումների ու մոտեցումների փոփոխության առաջամարտիկներ:

Եզրակացություններ

ՍՁ ոլորտի իրազեկման գնահատման արդյունքները փաստում են, որ Հայաստանում շարունակում է ցածր մնալ հասարակության շրջանում ՍՁ-ների մասին տեղեկատվությունը: Այսպես, դաշտային աշխատանքների հիմնական արդյունքները փաստում են, որ հարցմանը մասնակցած 18,586 մարդկանց 66.5%-ը կամ 12,364 մարդ տեղյակ չէ, թե ինչ են ՍՁ-ները, իսկ մնացած 33.5%-ը կամ 6222 մարդ տեղյակ է: Ընդ որում, ՍՁ-ների մասին տեղեկացված մարդկանց հիմնական մասը (78.2%-ը) ապրում են Երևանում, մինչդեռ մարզերում բնակվող հարցվողների շրջանում իրազեկվածության աստիճանը միջինում կազմել է 1.9%, օինչը բավական ցածր ցուցանիշ է: Ընդհանուր առմամբ, հարցվողների 52.5%-ը կարևորել կամ շատ են կարևորել ՍՁ-ների առկայությունը Հայաստանում, ինչը նույնիսկ ցածր իրազեկվածության պայմաններով, հուսադրող է:

Հետազոտության շրջանակներում իրականացված ֆոկուս խմբային հանդիպման ընթացքում ևս մասնակիցների կողմից բարձրաձայնվեցին մի շարք առանցքային մարտահրավերներ ու խնդիրներ, որոնք տևական ժամանակ խոչընդոտում են ՍՁ-ների զարգացման հնարավորությունները Հայաստանում: Որպես հիմնական խնդիրներ նշվել են ՍՁ-ների վերաբերյալ իրազեկվածության ցածր աստիճանն ու տեղեկատվության պակասը, որի լուծումը համակարգային ջանքեր է պահանջում ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթական ծրագրերի արդիականացման, իրազեկման ակտիվ արշիվների կազմակերպման և մեդիա դաշտի հետ համատեղ աշխատանքների կազմակերպման միջոցով:

Մեկ այլ մարտահրավեր է ՍՁ ֆինանսական միջոցների հասանելիությանն առնչվող խնդիրները: Հաշվի առնելով ոլորտի զգայունությունն ու խոցելիությունը՝ անհրաժեշտ են թիրախային աջակցման ծրագրեր իրականացնել, որոնք կարող են նպաստել սոցիալական ձեռներեցության ակտիվացմանն ու ընդգրկման շրջանակի

ընդլայնմանը, որոնք կարող են լինել ինչպես մասնակի դրամաշնորհային ծրագրերի, այնպես էլ անտոկոս փոխառությունների տեսքով:

Բացի այդ, Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացման լրջագույն մարտահրավեր է շարունակում մնալ օրենսդրական դաշտի անկատարությունն ու իրավակարգավորման բացակայությունը: Կարևոր է օրենքով արձանագրել «սոցիալական ձեռներեցություն», «սոցիալական ձեռներեց» և ոլորտին առնչվող հիմնական այլ հասկացությունները՝ ընդհանուր խաղի կանոնների սահմանման և հստակության ամրապնդման նպատակով:

Մյուս կողմից, բավական արդիական է սոցիալական ազդեցության շրջանակի գնահատման հստակ մեթոդաբանության բացակայությունը, որը կօգնի հասկանալ, թե ինչքանով է ՍՁ-ն կարողանում լուծել առաջադրած սոցիալական խնդիրն ու նպաստել գործունեության մասշտաբայնությանը:

Այս ամենն անհրաժեշտ է համադրել ոլորտի շահակիցների կարողությունների ու հմտությունների զարգացմամբ, փորձի փոխանակման ու համագործակցության առարկայական հարթակների ստեղծմամբ, մեդիայի հետ աշխատանքների ակտիվացմամբ, մարդկային ռեսուրսների արդյունավետ քաղաքականությամբ, ինչն, ընդհանուր առմամբ, Հայաստանում ՍՁ ոլորտի զարգացման համար հենքային նախապայմաններ կարող են դառնալ: